Կ. ՍԻՏԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՓԱՌ ԱՐԵՒԱԾԱԳԸ

ԵՒ ՎՐԱՑԵԱՆԻ ՄԱՐՈՂ ՁԷԹԻ ՃՐԱԳԸ

0247107

Հունվարի 24, 1949

Ֆիլադելֆիա

Կ. ՍԻՏԱԼ

1/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՓԱՌ ԱՐԵՒԱԾԱԳԸ

ԵՒ ՎՐԱՑԵԱՆԻ ՄԱՐՈՂ ՁԷԹԻ ՃՐԱԳԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 16

Հրատարակութիւն
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔ 1949

Printed in U.S.A.

ԲԱԶՄԱԹԻՒ ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼԲԻ

Համաշխարհային երկրորդ ահաւոր պատերազմի աւարտին եւ քիչ յետո, Կաթողիկոսական ընտրութեան եւ Հայաստանի Գրողների Միութեան համագումարի առիթով, կարեւոր թւով, հոգեւորականներ, առեւտրականներ, գրողներ եւ մտաւորականներ այցելեցին Հայոց Աշխարհը:

Ընկերային բոլորովին տարբեր դիրքի եւ տարբեր աշխարհայացքների պատկանող այս հայերը վերադարձան իրենց տեղերը տոգորուած ոգեւորութեամբ եւ խնդութիւնով: Նրանց ականատեսի բերկրալի լուրերը ելեկտրականացրին սփիւռքի հայրենասէր հայութիւնը:

Արտասահմանից գնացող այս պատգամաւորներն ու հրաւիրեալները տեսել էին մեր հայրենի չքնաղ երկիրը, շփման էին եկել եկեղեցական դասի եւ մեր մեծասքանչ ժողովրդի բոլոր խաւերի հետ եւ մասնակից էին դարձել նրանց ոգեւորութեան եւ ծաղկող խնդութեան: Նրանք իրենց բախտաւոր աչքերով տեսել էին՝ անդամ այդ զարհուրելի պատերազմի աւարտին եւ անմիջապէս յետո՝ մեր երկրում ծաւալող տնտեսական, մշակութային եւ ընկերային աննախընթաց նաւաճումները — նրա հոյակապ մեծագործութիւնները:

Զարմանալի չէր, ուրեմն, որ նրանց բերած ցնծութեան այս պայծառ լուրերը հաւատի, խանդավառութեան, ազնիւ ու մաքուր հայրենասիրութեան մի վիթխարի ալիք բարձրացրին, մինչեւ սփիւռքի ամենահեռաւոր ծագերը: Հայրենարաշխ դաղութահայութիւնը ողողուած էր հիացմունքով, կարօտով եւ կուռ միասնութեան հոգիով:

Օտար եւ հայ թշնամի մամուլի եւ շրջանակների սուտի եւ զրպարտութեան անմաքուր թելերից հիւսուած թանձր եւ անարդ վարագոյրը ճեղքուել էր: Եւ փարատուող ամպերի ետեւից ծագող շողշողուն եւ վեհափառ արեւի նման երեւան էր եկել մեր հերոսական եւ փառապանծ ժողովրդի ծիծաղկոտ եւ անուշ դէմքը:

Այս բախտաւոր այցելուներից մէկն էլ ես էի: Ես էլ սփիւռքի հայութեան եւ մասնաւորապէս ամերիկահայ մեծ եւ պատուական գաղութի սեփականութիւնը դարձրի հայրենի աշխարհից ինձ հետ բերած իմ անմոռանալի, դերերջանիկ տպաւորութիւնները եւ մեր հայրենիքի ապշեցուցիչ վերելքը բնորոշող պաշտօնական թուերն ու փաստերը:

Իմ այս գործը պարբերաբար երեւաց «Լրաբեր» եւ «Նոր Օր» թերթերում եւ ապա լոյս տեսաւ առանձին հատորով։

Յօդուածներս իսկոյն արտատպել սկսեցին սփիւռքի բոլոր մասերում։ Նոյնիսկ Պոլսահայ մամուլի մէջ երեւացին իմ այս գործից մի քանի կտորներ։

Թէ բաւական թւով դաշնակ շարքայիններ եւս հետաքրքրութեամբ հետեւեցին իմ տպաւորութիւններին եւ ծանօթացան մեր հայրենիքի ներշնչող իրականութեանը՝ այդ փաստում են նոյն այդ կուսակցութեան մամուլի ինձ եւ իմ գործի դէմ մղած կատաղի յարձակումները։

Հաղիւ թէ մի քանի յօդուածներս լոյս էին տեսել եւ ահա «Ասպարէզ»ում եւ «Հայրենիք»ում հրապարակ եկան մի շարք դաշնակ լրագրողներ մոլեգին, ատելավառ գրութիւններով։

Վերջերս էլ իմ ուշադրութեան յանձնուեց նախկին «Վարչապետ» եւ Դաշնակ Կուսակցութեան ռազմավար եւ վերին ղեկավար պրն. Սիմէոն Վրացեանի վեց յօդուածները գրուած իմ գրքի մասին։

ՊՂՏՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պրն. Վրացեանն իր յօդուածի առաջաբանում պատմում է թէ «մի բարի ձեռք» նրան ուղարկել է մի օրինակ իմ «Տեսա Մեր Երկրի Արեւածագը» գրքից։ Նոյն այդ «բարի ձեռքը» նրան գրել է հետեւեալ յատկանշական տողերը.—

«Ես սիրեցի հեղինակի գրելու ձեւը եւ անկեղծութիւնը։ Կարդա՛ եւ սիրտդ թող ցնծայ, քանի որ դուն ալ Հայաստանը կը սիրես։ Գրէ՛ կարծիքդ»։

Եւ պրն. Վրացեանը վեց երկար յօդուածներով աշխատում է այդ «մի բարի ձեռք»ի մաքուր ու հարազատ հայրենասիրական զգացումները պղտորելու համար գրել իր կարծիքն ու զայրոյթը։

Բարի ընթերցողը գուցէ մտածէ թէ պրն. Վրացեանը այսպէս զայրացել է որովհետեւ ես անպատշաճ, կոպիտ վիրաւորանք եմ հասցրել մեր պանծալի ժողովրդի հասցէին, որովհետեւ ես թերգնահատել եմ նրա հոյակապ վերելքն ու փառաւոր յաջողութիւնները — մեր երկրում կատարուող անմրցելի կերպարանափոխութիւնը։

Չէ, պրն. Վրացեանը այդպիսի պատճառներով չի բարկանում։

Պրն. Վրացեանը բորբոքուել է հէնց այն պատճառով որ ես դրական օրէն եւ ոգեւորութեամբ եմ մօտեցել հայ ժողովրդի ձեռք բերած անհաւատալիօրէն հսկա նուաճումներին, նրա հզօր ու պայծառ առօր-

եային, նրա մեծասքանչ եւ ստեղծագործ աշխատանքին։ Նա զայրացել է այն պատճառով որ «մի բարի ձեռք»ը եւ նրա նման բազմաթիւ Հայաստան սիրողները սիրել են նաեւ «հեղինակի գրելու ձեւն ու անկեղծութիւնը»։

Պրն. Վրացեանը փրփրել եւ իր պաղարիւնութիւնը կորցրել է որովհետեւ ես տուել եմ մեր հայրենիքի եւ ժողովրդի հարազատ պատկերը, ներբողել եմ նրա մեծագործութիւնները, խանդավառուել եմ նրա յաղթանակներով, նրա հրաշագործ աշխատանքով։ Նա մոլեգնել է որովհետեւ ես չեմ զրպարտել, չեմ թերգնահատել, չեմ վարկաբեկել, կոյր քինախնդրութեան եւ անարդ ստութեան խօսքերով չեմ ուրացել հայ ժողովրդի նորահրաշ եւ լուսապայծառ արեւածագը։

Երբեք էլ չեմ թաքցնել այն իրողութիւնը, որ ես Հայաստան գնացի ջերմ համակրանք եւ բուռն կարօտ իմ սրտում եւ վերադարձա անհուն սիրով եւ բոց խանդավառութեամբ։ Եւ սա հետեւանքն էր այն անհաւատալի եւ հրաշալի իրականութեան, որի մասին ես այստեղ աղօտ տեղեկութիւններ ունէի եւ որին ես ականատես եղա մեր մայր հայրենիքում հիացմունքով եւ յափշտակութեամբ։

Իմ տպաւորութիւնները ես գրի առի երախտագիտութեամբ, անսահման սիրով եւ խանդավառութեամբ, որովհետեւ մեր երկրի չքեղ իրականութիւնը ինձ այդպէս ներշնչեց։ Իմ հայրենիքի հանդէպ արտայայտած այս մեծ համակրանքի եւ սիրո ու խանդավառութեան համար ես ոչ մի պլջում չունեմ եւ ոչ էլ ոչ ոքից ներողութիւն խնդրելու պարտաւոր եմ զգում ինձ։ Սրանից տարբեր չէր անի եւ չէ արել ոեւէ ազնիւ ու մաքուր հայրենասէր հայ գրող ու մտաւորական։

Սակայն ես չէի կարող երեւակայել որ գտնուէին հայեր, այն էլ ըստ իրենց գիշեր ցորեկ ազգի ու հայրենիքի համար մեռնելու պատրաստ «յեղափոխական» հայեր, որոնք ընդունակ լինէին ցնծալ եւ ոգեւորուել միայն այն ժամանակ երբ մեր հոյակապ ժողովրդի եւ երկրի մասին վատ լսեն եւ վատ խօսեն։ Որոնք անկարող լինեն հանդուրժել երբ մի հայրենասէր ուղեւոր ուրախ եւ բարի «խապրիկներ է բերում մեր աշխարհէն»։

Պատասխանում եմ պրն. Վրացեանի այս կրքոտ եւ իր սեփական ժողովրդի հանդէպ թշնամական, վարկաբեկիչ յօդուածաշարքին որպէս պի «մի բարի ձեռքը» եւ նրա նման մաքուր հայրենասէրները հաստատ եւ անսասան մնան իրենց հաւատքի վրա։ Պրն. Սիմէոն Վրացեանը կարօտ չէ լուսաբանութեան եւ փաստերի։ Նա ժխտում եւ արհամարհում է ամեն փաստ եւ լուսաբանութիւն, որ նպաստաւոր է մեր հայրենիքին։ Ես այնքան էլ միամիտ չեմ որ հաւատամ թէ իմ

պատասխանը հալածիչ Սողոսին՝ աւետարանիչ Պօղոսի կը փոխի։ Ես չեմ գրում Սողոսների եւ ուխտեալ թերահաւատ Թովմասների համար։ Ես գրում եմ հայրենակարօտ դաղութահայութեան համար, բարեմիտ դաշնակ շարքայիններին համար, որոնցից պրն. Վրացեանը փորձում է թաքցնել մեր հայրենիքի պայծառ իրականութիւնը։

ՊՐՆ. ՎՐԱՑԵԱՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԱՆՑՈՒՄ

Խօսելով իմ գրքի մասին պրն. Վրացեանը գրում է. «Նորութիւններ չտեսա գրքի մէջ։ Այդ ամենը յայտնի բաներ են ուրիշ աղբիւրներից աւելի մանրամասն եւ փաստացի։ Ես գիտեմ, որ հայ ժողովուրդը ուր էլ որ լինի, անդուլ ստեղծագործում և ծաղկեցնում է երկիրը»։

Ինքս էլ հէնց միեւնոյն բանն եմ ասել իմ գրքում՝ չեշտելով անշուշտ, թէ «հայ ժողովուրդը ստեղծագործում եւ ծաղկեցնում է» երկիրը չնորհիւ Սովետական Միութեան եղբայրական ժողովրդների բերած լայն եւ մեծասիրտ օժանդակութեան եւ նրանց հզօր պաշտպանութեան ընծայած ցանկալի խաղաղութեան։ Պրն. Վրացեանը ընդունում է որ ուրիշ գրողներ, ուրիշ այցելուներն էլ նոյն տեղեկութիւններն են տուել միայն թէ «աւելի մանրամասնօրէն եւ աւելի փաստացի»։ Շատ լաւ եւ շատ բարի։

Մի բոպէ մտածում ես թէ պրն. Վրացեանի եւ իմ միջեւ տեսակէտի տարբերութիւն չկա։ Թէ իմ համեմատաբար շատ տկար փաստերը զօրացնելու համար պրն. Վրացեանը պիտի տա աւելի մանրամասնութիւններ եւ ապացոյցներ մեր ժողովրդի փառաւոր վերելքը աւելի ցայտուն եւ արժանաւոր կերպով ներկայացնելու համար քան որ ինձ յաջողուել է անել։

Բայց յանկարծ պրն. Վրացեանը խելքի է ընկնում, որ իր տրամաբանութիւնը խիստ վտանգաւոր ուղիով հակառակ է դնում Սովետական Հայաստանի հանդէպ իր հոգում կուտակուած քինախնդրութեան եւ թշնամութեան։

Նա իսկոյն իրեն ուղղում է թէ Հայաստանում ինչ որ կատարուել է, դա եղել է «հակառակ սովետների դաժան եւ աղատ նախաձեռնութիւնը կաշկանդող վարչաձեւի»։ Նա ոչ միայն պնդում է թէ սովետների վարչաձեւը ոչ մի կերպով չէ օգնել մեր երկրում ծաւալող ստեղծագործութեանն ու ծաղկմանը, այլ նա շեշտում է թէ այդ փայլուն վերելքը կատարուել է հակառակ սովետների վարչաձեւի, հայ ժողովրդի «հրաշագործ հանճարով» միայն։

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ՝ ԱՌԱՆՁԻՆ ԵՒ ԱՊԱ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՁԵՒԻ ՆԵՐՔԵՒ

Տեսնենք թէ իրականութիւնը եւ պատմական անողոք փաստերը ի՞նչ են ասում այդ մասին։

Այն չատ սիրելի հողամասում, որ Սովետական Հայաստանն է հիմա, հայ ժողովուրդը ապրել է հազարաւոր տարիներով։ Այդ հողամասն է եղել մեր պետական, կրօնական եւ մշակութային կեանքի առանցքը։

Ցաւոտ վէրքերի նման այս հողամասը ծածկել էին բազմաթիւ ընդարձակ ճահիճներ, ղռեր եւ չոր ու տխուր անապատներ։ Այդ երկարաձիգ տարիների տեւողութեանը եւ պրն. Վրացեանի դլխաւորած հանրապետութեան ցաւագին ու մռայլ օրերում ճահիճները մնացել էին էլի նոյն հիւանդութեան եւ մժեղների բոյն, ղռերը մնացել էին իրենց տեղում եւ արեւակէզ ու անբեր անապատներում օձերն ու մողէսներն էին տիրապետում։

Սովետների «կաչկանդող» վարչաձեւի օրովն էր եւ նրա շնորհիւ որ ղռերն եւ ճահիճները չորացան մեր ժողովրդի վէրքերի նման եւ մրգաշատ այգի եւ անդաստան դարձան։ Անապատներում օրհնութեան երգի նման հնչեց խուժող, կենսատու ջրերի ուրախ կարկաչը եւ ծաղկուն պարտէզներ ու ցորենի ոսկի արտեր եւ շէն ու բարգաւաճ գիւղեր ելան այնտեղ ուր օձերն ու մողէսները արդէն թողել, հեռացել էին։

Հայաստանի նիւրական հողը իրեն ընդերքում ունէր անվերջ եւ անդերազանց չինանիւթ, մետաղ, հանքային թանկարժէք նիւթեր եւ անհուն բարիք։ Եւ սակայն այդ ամենը մնում էր թաղուած մեր ժողովրդի արիւնով ներկուած այդ հողի ներքեւ՝ հեռու եւ անհաս ամեն բանի կարօտ մեր ժողովրդից։

Սովետներն էին որ պատռեցին մեր հողի փարթամ եւ բարի ծոցը եւ այն տեղից լոյս աշխարհ հանեցին բնակարան, եւ հարստութիւն եւ պարարտանիւթ, եւ գործիք ու երջանկութիւն։

Բարիքով յորդող Սեւանի չքնաղ լճից դուրս էր թափւում պատմական Հրազդան գետը՝ իր վաղքում թաղած անհաշիւ գանձ եւ լոյս եւ ուժ եւ ծիծաղ։ Բայց նա հոսում էր խելար եւ աննպատակ եւ անտարբեր անց էր կենում մեր չոր ու պապակած հանդերի եւ այգիների մօտով առանց մի կաթիլ ջուր տալու նրանց։

Սովետական վարչաձեւն էր որ նրա ընթացքը սանձեց եւ նրա երկայնքին բարձրացրեց ուժի եւ լոյսի հզօր կայաններ։ Այդ հսկայա-

կան ուժով դառնալ սկսան նորակերտ գործարանների անիւներն ու մեքենականութիւնը։ Այդ լոյսի գետերով, ձէթի եւ նաւթի ճրագների փոխարէն, ելեկտրական լամբերի հեղեղներով լուսաւորուեցին Հայաստանի քաղաքները, հիմնարկները, նոյնիսկ հեռաւոր գիւղերի չէն ու երջանիկ գիւղացու զուարթ բնակարանը։

Քսենեֆոնի օրերից ի վեր մեր գիւղացու տունը մնացել էր գետնափոր ու մռայլ մի խրճիթ։ Իսկ մեր քաղաքները փոչոտ ու նեղ եւ ոլորապտոյտ փողոցներով, անհրապոյր եւ ողորմելի տներով՝ ասիական յետամնաց, մժեղաչատ գիւղեր էին։

Սովետներն էին որ փոչոտ, անհրապոյր եւ վատառողջ այդ տխուր գիւղերի փոխարէն, ասես մի պայծառ մոգութեամբ, կանգնեցրին չքեղ եւ լուսաւոր ու ծիծղուն քաղաքներ հոյակապ շէնքերով եւ ծաղկուն պուրակներով։

Վճիտ ու սառնորակ լեռնային աղբիւրներով, արագավազ ու մաքուր գետերով հարուստ Հայոց Աշխարհում, հազուագիւտ բացառութեամբ, մեր ժողովուրդը մի կաթիլ մաքուր եւ պաղորակ ջրի կարօտ էր քաշում։

Սովետների վարչաձեւն էր որ բոլոր գիւղերում եւ քաղաքներում հոսեցրեց մեր լեռների անմահական աղբիւրների ջուրը եւ փողոցներում եւ բակերում եւ տներում հնչեց հեռաւոր լեռների կախարդական ջրերգը։

Այո՛, հրաշագործ եւ մեծահանճար էր հայ ժողովուրդը այն մռայլ օրերին ինչպէս որ է նաեւ այսօր։ Բայց նա ո՞րքա՛ն էր եւ անօգնական՝ ընկած աւազակների եւ բռնաւորների սմբակների ճանապարհի վրա։ Եւ իր բովանդակ հրաշագործ ուժով եւ հանճարով նա մնում էր յետամնաց, անգրագէտ եւ մարդավայել մի ապրուստի ամենատարրական միջոցներից զուրկ։ Նա անխնայօրէն տրորուում էր արշաւող հորդաների սմբակների ներքեւ։ Նրա մէկ օրուա չինածը յաջորդ օրում քար ու քանդ էր լինում։

Իր սեփական ուժով, իր մերկ եւ արիւնող բռունցքով նա անզօր էր իր հողից, իր հանդից, իր հնձանից, իր սրբավայրերից, իր դռնից, իր տնից եւ անգամ իր առաղաստի նիւթականութիւնից հեռու պահել ընչաքաղց, բռնակալ, վանդալ, ոճրագործ եւ վաւաչոտ թշնամուն։

Մեր ժողովրդի հրաշագործ ուժն էլ, նրա մեծ հանճարն էլ Զանգուի բարիքով առատ ջրի նման վատնուում, աննպատակ թափուում, գնում էր։

Սովետական ռուս մեծասիրտ ու բարի ժողովրդի օգնութիւնն

էր, Սովետական Միութեան եղբայրական ժողովրդների անխարդախ բարեկամութիւնն ու հզօր պաշտպանութիւնն էր որ հայ, նիւթ եւ մեքենա եւ խաղաղութիւն ուեց, որ գործիք ու քաջալերութիւն ապահովեց հայ ժողովրդի համար:

Առանց այդ մեծահոգի, բարեբախտ օժանդակութեան, առանց այդ վստահ պաշտպանութեան՝ մեր ժողովրդի բնատուր հանճարն եւ ստեղծագործական մեծ կարողութիւնը դարձեալ կը մնային անիմաստ եւ ապարդիւն: Եւ մեր երկիրը կը մնար այն ողորմելի եւ արգահատելի վիճակում, որով նա մնացել էր դարեր դարերով:

Իսկ ձեր օրպակաս հանրապետութեան շրջանում, պրն. Վրացեան, սովն ու համաճարակը, բռնութիւնն ու տնտեսական եւ բարոյական քայքայումը այնպիսի աննախընթաց չափերի հասան, որ հայ ժողովրդին իր ստոյգ անյայտացման եզրը հասցրին: Կէս միլիոն հայերի ահաւոր կորուստը մնում է ձեր ղլխաւորած հանրապետութեան անքաւելի ոճիրը:

Խոշոր նիւթական օժանդակութիւնն էլ մեզ պէս մի փոքր ժողովրդի համար անպէտք եւ անօգուտ է հանդիսանում, եթէ այն գործածւում է այդ ժողովրդի շահերին ներհակ նպատակների համար: Նիւթական օժանդակութիւնը իրեն հետ պիտի ունենա օժանդակող հզօր երկրի անկեղծ եւ անպայման բարեկամութիւնը:

Առէք մեծատաղանդ, մեծաշնորհ եւ մեզ եղբայրակից ու դարերով բախտակից յոյն ժողովրդին: Նրանք էլ եթէ մեզնից աւելի հրաշագործ չեն, աւելի պակաս էլ չեն: Նրանք էլ նիւթական վիթխարի օժանդակութիւն են ստացել եւ տակաւին ստանում են սովետների հակառակորդ մեծ պետութիւններից: Բայց այդ օգնութիւնը դալիս է թէեւ օժանդակութեան պիտակով եւ սակայն բոլորովին տարբեր նպատակի համար եւ բոլորովին տարբեր ձեւով: Այդ «օգնութիւնը» տրւում է, որ մեծ պետութիւնների ֆինանսի կայսերների շահերը ստոյգ եւ ապահով մնան, որ այդ շահերը պաշտպանող ռազմային ճանապարհները բաց պահւին, որ պատմութեան մեծ ոճրագործ եւ բռնակալ Թուրքիայի ամբողջականութիւնը պահպանի ի հաշիւ դաշնադրով հաստատուած «փոքր դաշնակից» հայ ժողովրդի պատմական հողերի:

Այդ վիթխարի գումարները թափւել եւ թափւում են անբախտ յոյն ժողովրդի արիւնարբու միապետականների, Հիթլերի երէկւա ստոր գործակիցների (ականջը խօսի Դրոյի եւ իր կառավարութեան) եւ յոյն տղրուկ վաշխառուների արիւնոտ դանձարանում:

Բայց վերելքի եւ շինարարութեան փոխարէն Յունաստանում

չարունակւում է քանդում եւ քայքայում, առատութեան փոխարէն թշառութիւնն եւ սովն են տիրում, խաղաղութեան փոխարէն եղբայրասպան, արիւնոտ կռիւներ են մղւում նոյնիսկ այս օտար «բարերար»ների ուղղակի պահանջով, ցուցմունքով եւ ստիպման ներքեւ: Եւ տասնեակներով, հարիւրներով եւ հազարներով սքանչելի եւ անվեհեր եւ անընկճելի յոյն յեղափոխական կին ու աղամարդ հրացանազարկ են լինում այդ անպատմելի բռնութեան դէմ դուրս եկած լինելու մահացու յանցանքի համար:

Եւ գետերի նման հոսող «օգնութեան» այս հեղեղում՝ պատմական փառապանծ եւ հերոսական Ցունաստանը փուել է թշառ, քանդուած եւ արիւնաքամ:

Հայ ժողովուրդը իր ճակատին ստոր ապերախտի մնայուն խարանը պիտի կրէ եթէ երբեւիցէ մոռանա ռուս մեծ ժողովրդի փրկարար, անձնուրաց օգնութիւնը, Սովետական Հզօր Միութեան եղբայրական ժողովրդների պաշտպանութիւնն ու բարեկամութիւնը:

Այն հայը, որ սրանից տարբեր է մտածում, տարբեր է արտայայտւում եւ տարբեր է գործում՝ նա՛ դաւաճանում է հայ ժողովրդի ամենանուիրական զգացումներին, նա մի ստոր ապերախտ է:

Պրն. Վրացեանն եւ իր համախոհները վերջին 30 տարիների ընթացքում խօսքով ու գործով դէմ են գնացել հայ ժողովրդի երախտագիտական այս շատ ջերմ եւ անկեղծ զգացումներին: Իրենց հանրապետութեան օրով նրանք փորձեցին սրով եւ հրով անկարելի դարձնել անօգնական եւ թշառ հայ ժողովրդի եւ ցարերի անարդ լծից ձերբազատուած ռուս մեծ ու հզօր ժողովրդի մերձեցումը: Հայաստանի աշխատաւորների երկաթէ աւելներով երկրից դուրս չպրտելուց յետոյ՝ արտասահմանում որջացած՝ նրանք ամեն կարելի միջոցի առաջ կանգ չեն առել խաղաղ եւ լուսաշող վերելքով բախտաւորուած մեր ժողովրդին բաժանելու իրեն պաշտպան ռուս մեծասիրտ ժողովրդից, Սովետական Միութեան հզօր պաշտպանութիւնից: Նրանք փորձել են մի անգամ էլ հայ ժողովրդին յանձնել բռնակալներին եւ կեղեքիչներին եւ արեւմտեան պետութիւնների դիւանագիտական զառամած գայլերի սոսկալի ողորմածութեան:

«ԴՐՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի ՍՏԵՂԾՄԱՆ ՋԱՆՔԵՐԸ

Բարեբախտաբար պրն. Ս. Վրացեանն ու նրա ընկերները չարաչար պարտուել են եւ պիտի պարտուեն օտար յետադիմական շրջանակների հաշուին իրենց սեփական ժողովրդին կործանման առաջնորդելու այս անպատիւ աշխատանքում:

Մինչեւ հիմա նրանք պէտք է որ գլխի ընկած լինեն թէ իրենց եւ իրենց տէրերի ուժից եւ հասողութիւնից շատ վեր է մնում Հայաստանը։ Բայց կա եւ մնում է հայրենասէր եւ հայրենակարօտ սփիւռքի հայութիւնը, որին պրն. Վրացեանը «Դրսի Հայաստան» անունն է փակցրել, ի հարկէ շատ շիլ նկատումներով։

Վրացեանն ու նրա ընկերները ոեւէ միջոցի առաջ կանգ չեն առնում հայրենասէր գաղութահայութիւնը «Դրսի Հայաստան»ի վերածել եւ այնտեղ չինել իրենց ռազմակայանները Ներսի Հայաստանի դէմ կուելու համար։ Իսկ գաղութի հայութիւնը մնում է կանգնած իր ժողովրդի եւ մայր հայրենիքի կողքին Մասիս Սարի պէս հաստատ եւ անսասան։

Միջազգային քաղաքականութեան այս փոթորկալից օրերին Վրացեանն ու ընկերները այլեւս մէկ կողմ են շպրտել ամեն «հայրենասիրական» կեղծիք եւ Հայաստանի «լոյալ», գաղափարական հակառակորդի ամեն պատրուակ։ Նրանք հիմա այս պղտոր եւ գարշահոտ ջրում իրենց ձուկն են փնտռում։ Նրանց լեղուն շատ է երկարել։ Մոռացել են հիտլերական Գերմանիայի պատերազմական արիւնոտ կառքին իրենց դեռ երէկ կապուած լինելու ահաւոր իրականութիւնը։ Կարծում են որ մի քանի յետադիմականների պիտի յաջողւի ամերիկեան վառապանծ եւ մեծ դեմոկրասին, Լինքընի, Ուիլսընի եւ Ռուզվելթի սղատատենչ հայրենիքը ռազմատենչ եւ կուազան մի բիրտ ուժի վերածել՝ որպէս սպառնալիք կախուած պահելու համար համաշխարհային խաղաղութեան գլխին։

Պրն. Վրացեանի եւ իր գործակիցների այս տեսակի տմամբ երազներն էլ յոգս պիտի ցնդեն։ Եւ նրանք պիտի մնան դարձեալ օդում՝ առկախ։

Տակաւին յուսալից եւ իրենց համար նպաստաւոր կարծուած այս վայրկեանին պրն. Վրացեանը մոռանում է ամեն պատշաճութիւն եւ զգուշութիւն եւ աջ ու ձախ նախատինք եւ հայհոյանք է շպրտում հայ ժողովրդի պայծառ իրականութիւններով ոգեւորուած ամեն անհատի հասցէին։

Նա կրակ ու բոց է ժայթքում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եւ ապա մեր դրականութեան պարծանք եւ պատկառելի նահապետ Աւետիք Իսահակեանի դէմ, որովհետեւ նրանք ներբողել են հայրենադարձի պատմական եւ մեծ իրականութիւնը։ Որովհետեւ նրանք անսասան հաւատք են յայտնել մեր պատմական հողերի վերստացման մասին։ Որովհետեւ նրանք դատապարտել են Թուրքիայի հողերի ամբողջականութեան պաշտպանութիւնը ի վնաս մեր պատմական հողերի պահանջին։

Նա առանձին գոհունակութեամբ եւ հաճոյքով է ծաղրի ենթարկում Հայաստանի ղեկավարների եւ Սովետական կառավարութեան խոհեմ եւ զգոյշ ընթացքը, որովհետեւ միջազգային բաղաքականութեան ներկա պայթուցիկ կացութեան հետեւանքով նրանք չեն փորձում հայկական հողերի պահանջը միջազգային մի երրորդ սիաւոր պատերազմ առաջացնելու աստիճան առաջ քշել: *Որովհետեւ արտասահմանի որոշ մասերում հայրենադարձի գործը սպասում է աւելի խաղաղ եւ բարւոք պայմանների: Նա գոհունակութեան չար քրքիջ է արձակում, որ նոյն այդ կացութեան հետեւանքով սփիւռքի որոշ մասերի եւ մայր հայրենիքի միջեւ աւելի հեշտ եւ սերտ մշակութային եւ եղբայրական կապ չի պահւում: Գուցէ պր. Վրացեանին ծանօթ չէ ժողովրդի այն իմաստուն ասացուածքը թէ ժամանակ կա «երբ լռելը — ոսկի է» իսկ խօսելը ոչ թէ արծաթ, այլ անմիտ մարդու գործ է:*

Թէ հայրենադարձը պիտի չարունակւի եւ իրականութիւն պիտի դառնա հայ ժողովրդի միատեղումը, թէ մեր հողային պատմական արդար եւ միջազգային դաշնադրերով հաստատուած պահանջները պիտի լուծւեն մեր ժողովրդի ցանկութեան համաձայն, այդ մասին միայն հայրենատեացներն ու հայ ժողովրդի թշնամիները կարող են կասկածել:

ՍԱՆՁԱՐՁԱԿ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՒ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Պրն. Վրացեանը, որ այսքան մոլեգին կրքով եւ ատելութեամբ եւ արհամարհանքով է խօսում Հայաստանի վարչաձեւի, մտաւորական եւ գրող ղեկավարների եւ առհասարակ գործերի ընթացքի մասին, չգիտեմ ինչո՞ւ չատ է զայրացել եւ զարմացել որ Հայաստանի գրողների վարչութիւնը՝ գրողների համագումարին մասնակցելու չէ հրաւիրել ծանօթ դաշնակ, Հայաստանի թշնամի եւ դասալիք գրողներին: Կարծում էի թէ նախկին «վարչապետ»ը հասկանում է քաղաքավարական այն տարրական սկզբունքը, որ ոչ մի մարդ իր յայտնի եւ անուղղա թշնամուն իր տանը չի հրաւիրում: Եւ թէ նրա թշնամիները մի այսպիսի հրաւէրի մասին մտածելու անդամ իրաւունք չունեն:

Մեծ «վարչապետ»ին չատ է զայրացրել նաեւ Ամենայն Հայոց բաղմահմուտ Հայրապետի չատ լուրջ եւ տեղին քննադատութիւնը նախասովետական հայ ղեկավար շրջանակների անդլիասէր եւ հակառուս խելագար քաղաքականութեան մասին: Սա մի կործանարար եւ ինքնասպան դիրքաւորում էր, որ սկսւեց Բերլինի չարաբախտ վեհաժողովի օրերից եւ տարածւեց մինչեւ հայկական կոտորածները, մինչեւ 1915-ի աննախընթաց տեղահանութիւններն ու մէկ ու կէս միլիոն հայերի ոչնչացումը, մինչեւ Կարսի, Արտահանի եւ Սուրմալուի նահանգների ազէտալի կորուստը:

Այս ժողովրդական քաղաքականութեան վերջին եւ յամառ ծառան եւ Կարս ու Արտահան եւ Սուրմալու նահանգները Կարաբէքիրին նէր ու

Նմանապէս անօգուտ եւ անտեղի եմ համարում «սարէն, ձորէն» հաւաքուած, անյարակից, անկապ ամէն կարգի հարցերին պատասխանել, որովհետեւ դրանք իմ գրքի եւ նիւթի հետ ոչ մի կապ չունեն եւ նրանց պատասխանը մեզ մի տեղ չի հասցնի: Ես նաեւ ուզում եմ յայտնել պրն. Վրացեանին եւ իմ ընթերցողներին, որ իմ այս պատասխանով ինձ համար այս խնդիրը փակուած եմ համարում որովհետեւ մենք երկուսս տարբեր լեզու ենք խօսում:

ԵՍ ԳՐԵԼ ԵՄ ԲԱՑԵՐԻ ԵՒ ԹԵՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի լուսաւոր ու նպաստաւոր կողմերը, որոնք չա՞տ են եւ դերազանց, ես տեսել եմ ոգեւորութեամբ եւ յուզմունքով: Սակայն ես չեմ մոռացել նշելու նաեւ Հայաստանի դեռ շատ երիտասարդ, եւ անսահման աւերածութիւն եւ դժուարութիւն ժառանգած սոցիալիստական հանրապետութեան բացերն ու թերիները: Պրն. Վրացեանը պնդելով պնդում է որ իմ գործը սովետական վարչաձեւի միակողմանի փառաբանութիւնն է: Ասում է նա «Սիտալի համար Հայաստանում թերիներ եւ բացեր չկան»:

Ադնիւ ընթերցողների ուշադրութեան եմ յանձնում իմ գրքի 92րդ էջում երեւցող հետեւեալ տողերը.—

«Ձեմ ուզում սակայն այն տպաւորութիւնը թողնել, որ այսօր մեր երկիրը մի կատարեալ դրախտ է, որ բացեր ու պակասներ չկան: Որ մեր ժողովուրդը եկել, հասել է մի տեղ, ուր այլեւս նոր յաղթանակներ չկան շահելու, ուր նոր եւ աւելի մեծ բարձունքներ չկան հասնելու:

«Այսպիսի մի թելադրութիւն անգամ զարհուրելի անարգանք պիտի լինէր հայ ժողովրդի եւ նրա տիտանական, փառաւոր աշխատանքի հանդէպ:

«Մեր երկիրը նման է այն վիթխարի շինարարութեան, որի միայն հիմքերը եւ գուցէ պատերի մի մասն են դրուած: Մեծ, հոյակապ, լուսապայծառ կառուցածքը ամբողջացած լինելուց տակաւին հեռու է: Բայց այդ մեծափառ շէնքի կառուցումը շարունակւում է կայծակնաթափ, լուսավաղ արագութեամբ:

«... Իրականութիւնից աւելի ստոյգ աւարտման լուսաշող այս հեռանկարն է, որ մեր ժողովրդին մոռացնել է տալիս ապրանքի, բնակարանի եւ շռայլութեան առարկաների պակասն ու անյարմարութիւնները:

«Ո՛չ կառավարութիւնը, ո՛չ մտաւորականները, ո՛չ դրողներն ու արուեստագէտները եւ ոչ էլ մեր հիանալի ժողովուրդը չեն ցանկա-

նում, որ այստեղ կատարող հրաշափառ վերելքի եւ յառաջդիմութեան հետ չը շեշտուին նաեւ գոյութիւն ունեցող բացերն ու պակասները։ Այս բացերը, սակայն, նախասովետական շրջանից մնացած տխուր ժառանգութիւններ են։ Նկատի ունենալով ցարդ կատարուած մեծագործութիւնները՝ անվարան կերպով կարելի է ասել թէ շատ մօտիկ ապագայում այս բացերը պիտի դառնան լոկ անցեալից մնացած մռայլ յուշեր»։

Մի՞թէ վերեւի իմ այս տողերից աւելի ցայտուն եւ անկողմնակալ կերպով կարելի՞ է տալ նորակառոյց եւ երիտասարդ մի երկրի բացերն ու պակասները, որոնք ինչպէս որ ասել եմ անցեալից մնացած տխուր ժառանգութիւնների հետեւանք են։

Բայց պրն. Վրացեանի եւ իր համախոհների փնտռածն ա՛յդ չէ։ Նրանք շատ լաւ են իմանում որ վերեւ մատնանշուած բացերն ու պակասներն անդամ չեշտում են մեր ժողովրդի չքեղ եւ յաղթական դրոհը դէպի այն լուսաւոր երջանկութիւնը, դէպի այն ծով լիութիւնը որ կայծակնաթափ շինող նրա փառահեղ կառուցածքն է խորհրդանշում։

Նրանց փնտռածը բամբասանքն է։ Անդո բռնութեան, հալածանքի, մտքերի եւ հոգու կաշկանդման, ժողովրդի իրաւունքների ոտնակոխման այն մտացածին, պառաւական հէքեաթները, որոնք իրենց միամիտ եւ թշուառ շարքայիններին են հրամցնում որպէս հոգու եւ մտքի կերակուր՝ նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի ընթացքում։

ՀԱԼԱՆԾԱՆԲԻ ԵՒ ՍԱՐՍԱՓԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հակասովետական առասպելների դերեղմաններից եւ դաղաղից պրն. Վրացեանը այժմ դուրս է բերել վաղուց թաղուած, օտար դեղին մամուլի զօրավարների կողմից անդամ մեռած եւ անկենդան համարուած մի հին, փտած առասպելի ոլորմելի կմախքը — սովետական վարչաձեւը վարկաբեկելու համար։

Սա Տրոցկիական–Բուխարինական անարդ դաւաճանների գործակից հայ վնասարարների եւ դաւաճանների դէմ աւելի քան 12 տարի առաջ ի գործ դրուած մաքրագործումի մասին սովետատեացների շինած ֆանթազիայի ժանտահոտ դիակն է, նրա պժգալի կմախքը։

Իրենց հայրենիքն ու ժողովուրդին Հիտլերի Գերմանիո եւ կողոպտիչ Ճապոնիային երեսուն արծաթի ծախող այդ ստոր դաւաճանների շարքում, որոնք հասել էին սովետական երկրի պետական դէմքերի, կուսակցական գործիչների, եւ գրողների ու մտաւորականների

պատեւաւոր դիրքերին, դտնուեցան նաեւ հայ դաւաճաններ։ Որպէս իրենց ժողովրդի դէմ դաւաճանողների եւ վնասարարների այս անազնիւ եւ անարժան հայերն էլ պատժուեցին իրենց յանցանքի ծանրութեան եւ լրջութեան համապատասխան չափով։

Նրանք պատժուեցին ոչ թէ իրենց գիտական ըմբռնումների, ընկերային գաղափարների եւ գրական ուղղութեան համար, այլ իրենց ստոր հայրենադաւութեան հետեւանքով։

Յաջորդական մեծ եւ աշխարհացունց դէպքերը երեւան բերին թէ որքան զգօն եւ հեռատես եւ արդարացի էր սովետական ղեկավարութիւնը, որ կարողացել էր ուղիղ ժամանակին եւ տեղն ու տեղը ջախջախել «դրսի» քաջալերութեամբ եւ ցուցմունքով իրենց սեփական ժողովրդին մահացու կերպով խայթելու պատրաստուող այդ ժանտ իժերի դլուխները։

Ամենակատաղի հակասովետ մի պետական անձնաւորութիւն, Չըրչիլն անդամ յայտարարեց թէ այդ դաւաճանների եւ վնասարարների մաքրագործումը ոչ միայն փրկեց սովետական ժողովուրդներին, այլ համայն մարդկութեան համար ապահովեց ցանկալի յաղթանակը հիտլերական ահաւոր բռնութեան դէմ։ Բայց պրն. Վրացեանը միայն այս հին եղանակը դիտէ եւ երդում է խժալուր եւ անվերջ։

Նա անամօթաբար յայտարարում է թէ Հայաստանի դրողը ենթակա է անլուր բռնութեան, թէ նրա միտքը կաշկանդուած է, թէ նրա կեանքն անդամ մշտական սպառնալիքի ներքեւ է դտնուում։ Բայց ի՞նչ է իրականութիւնը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂԸ ՇՐՋԱՊԱՏՒԱԾ Է ՍԻՐՈՎ ԵՒ ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔՈՎ

Հայաստանի տարեկան մէկ ու քառորդ միլիառ պետական բիւջէի 25 տոկոսից աւելին ծախսւում է ուսման եւ մշակոյթի պանծացման համար։

Այնտեղ շատ կարճ ժամանակում ընդհանրական անդրաճանաչութիւնը համատարած դրագիտութեան է վերածուել։

Այնտեղ աչքի լոյսի նման դուրդուրում եւ պահպանում են մեր անցեալի մշակոյթի ամեն մի փոքր նշխարն ու գործը։

Այնտեղ ժողովրդի բերանից եւ փոշիների տակից երկիւղածօրէն եւ ծրագրուած աշխատանքով հաւաքում են մեր ժողովրդական անգիր բանահիւսութեան թանկարժէք դանձերը — երգեր, հէքեաթներ, աւանդավէպեր, ասացուածքներ, դաւառական եւ տեղական բառեր ուսումնասիրութեան եւ մշակման համար։

Այնտեղ փառակազմ եւ չքեղ հատորներով լոյս են ընծայւում եւ լայն խաւերին ծանօթացւում Եղնիկի, Եղիշէի, Խորենացու, Շիրակացու, Նարեկացու եւ միջնադարեան մեծ երգիչների Քուչակի եւ Սայաթ Նովայի եւ բազմաթիւ տաղասացների եւ գրողների, Աբովեանի ու Ռաֆֆու եւ Պարոնեանի, ու Դուրեանի եւ Նալբանդեանի, Տէրեանի եւ Թումանեանի, Մեծարենցի ու Վարուժանի եւ բոլոր արժէքաւոր հին ու նորագոյն գրողների ամբողջական երկերը:

Հայաստանի սովետ վարչաձեւի օրով էր, որ մոռացութեան փոշու տակից հանւեց եւ սքանչելի հրատարակութեամբ, քանդակներով, նկարներով, բալէտով եւ օպերայով հայ ժողովրդի եւ միութենական ժողովրդների ներշնչման եւ հիացմունքի առարկան դարձւեց մեր ժողովրդի հանճարեղ, անմահ եւ յեղափոխական մեծ դիւցազնավէպը — Սասունցի Դաւիթ, կամ Սասնա Ծռեր:

Այնտեղ ընթերցանութեան եւ մշակոյթի սէրը դարձել է իրական վայելք, օդի եւ ջրի չափ կարեւոր մի պահանջ:

Հայոց աշխարհում արժանաւոր գրողին տրւում է «հոգիների ճարտարապետ» վսեմ եւ նախանձելի տիտղոսը:

Գրի ու գրչի պանծացման մի այսպիսի երկրում, մի երկրում, ուր մշակոյթը ընդհանրական յարգանքի եւ անհուն վայելքի առարկա է դարձած, մի երկրում, ուր ամենափոքր ու հեռաւոր գիւղն անգամ մասնակից է դարձած այս վայելքին ու յարգանքին — այսպիսի մի երկրում գրողին եւ մտաւորականին կարող են սպասել միայն համատարած եւ անկեղծ սէր, յարգանք ու գուրգուրանք թէ ժողովրդի եւ թէ պետութեան կողմից: Հայաստանի գրողն ու մտաւորականը նիւթական առատ վարձատրութիւնից դուրս, ստանում են նաեւ այս առանձին ուշադրութիւնը: Եւ նրանք աւելի քան արժանի են այդ սիրո եւ հոգածութեան:

Հայաստանի գրողը աշխարհի ամենաբախտաւոր գրչի մշակն է: Որովհետեւ նա ապրում է վերելքով, հերոսութեամբ եւ յաղթանակներով հարուստ մի երկրում: Որովհետեւ նա մասնակից եւ ուղեկցարար է հանդիսանում բոլոր պայքարներում, կառուցման ամեն մի գործում, ամեն մի ստեղծագործական, գեղեցիկ աշխատանքում: Որովհետեւ իր երկրի պանծալի աշխատաւորութեան հետ եւ նրա առաջաւոր դիրքերից նա գրոհում է դէպի միշտ աւելի երջանիկ եւ լիառատ մի կեանք: Որովհետեւ նրա արուեստը յորդուն է ուժով, հաւատքով, գեղեցկութեամբ եւ խնդութիւնով: Որովհետեւ նրա գործը տոգորւած է դէպի կեանքն ու մարդկութիւնը անսահման սիրով եւ համակրանքով: Որովհետեւ նա իր հերոսական եւ փառապանծ ժողո-

վրդի խսկական դաւակն է, նրա հարազատը։ Եւ որովհետեւ նա միայն իր ժողովրդի եւ համայն մարդկութեան անձնուրաց եւ անշահախնդիր ծառայութեան մէջն է տեսնում իր կեանքի եւ գործի իմաստը։

Ահա այսպիսի բերրի մի հողում եւ այսպիսի ճարտար եւ անձնուրաց գրչի մշակների ձեռքով է ,որ ծաղկում, ուռճանում եւ փարթանում է հայ ժողովրդի նորագոյն գպրութեան ոսկեդարը։

Բանաստեղծութեան, արձակի, թատերգութեան, բանասիրական եւ գրական վերլուծումի մարզերում երեւան են եկել բազմաթիւ պայծառ գէմքեր ու տաղանդներ, գեղեցիկ ու տեւական արժէքով հարուստ մի ստեղծագործական առատ հունձքով։

Այս գործերը բոլորովին նոր ու թարմ են իրենց չունչով, կեանքի եւ իրողութիւնների մասին իրենց աշխարհայեացքով։ Նրանց մէջ բաբախում է մեր ժողովրդի հզօր ու հրաշագործող կեանքը եւ մի եղբայրական, երջանիկ մարդկութեան չքեղ կերպարը՝ ողողուած նոր տեսիլքներով, նոր եւ պայծառ հեռանկարներով։

Այնքա՜ն մեծ է թիւը մեծատաղանդ, արժէքաւոր սովետահայ գրողների, որ մեծ անարդարութիւն եւ անարդանք պիտի լինէր նրանց ամբողջականութեան՝ եթէ ես փորձէի տալ մի երկուտասնեակ անուններ որպէս ներկայացուցիչ այդ արժանաւոր գրչակիրների մեծ բանակի, որպէս նմոյշ հոգիների այդ խոհական ճարտարապետների։

Եւ նրանք քայլում են հպարտ եւ խիզախ դէպի աւելի մեծարժէք ու առատ մի գրական հունձք, դէպի աւելի ճոխ ու բովանդակալից գպրութիւն, մի ոսկի մրգահաս։

ՈՐԻՐ Է ՁԷԹԻ ՃՐԱԳԸ

Դուինի պեղումներից ինձ հետ յիշատակ բերած՝ հայ ժողովրդի արիւնոտ անցեալը, նրա ահաւոր տառապանքը, նրա դարաւոր ըստրկութեան անթափանց խաւարը խորհրդանշող ձէթի ճրագը երեւի շատ է ներդաշնակւել պրն. Վրացեանի չարաղուշակ եւ անյոյս տրամադրութեան հետ։ Ձէթի ճրագի հետ նրա ունեցած զգացմունքային եւ հոգեկան այս նմանութիւնն է որ թշւառ եւ աթոռազուրկ «Վարչապետ»ին իր յօդուածաշարքն էլ «Ձէթի ճրագը» անուանել է տուել։

Այս տարօրինակ, հակասական եւ գրպարտիչ յօդուածներում նա մի բոպէ ընդունում եւ միւս վայրկեանում ժխտում է մեր երկրի կայծակնաթափ եւ հրաշալի վերելքը ճիշտ ինչպէս որ ձէթի ճրագը մի բոպէ տակայծում է եւ յաջորդ ակնթարթում աղօտանում է մարելու աստիճան։ Նա ողբում է երջանիկ եւ ստեղծագործող մեր ժողովրդի ապա-

հով եւ նախանձելի կեանքը որպէս զարհուրելի բռնութիւն ու տառապանք — որովհետեւ նրա կեանքը ողբալի եւ տխուր է։ Նա ծաղրում է հայրենաղարձի պատմական գործը եւ մեր դարաւոր հողերը թուրք գաւթիչների ձեռքից ազատելու հաւատքը, որովհետեւ նա ոչ հայրենաղարձի յաջողութեան է ցանկանում եւ ոչ էլ մեր սրբազան հողերի ազատագրմանը։

Ներկա Հայաստանում յուսալից ,ուրախ, լաւ մի բան նա չի տեսնում — այլ միայն սեւ ու խաւար եւ անյուսութիւն։ Ասես չոր կմախքների եւ ամայութեան վրա թալրտացող մի ցաւագար սեւ ագռաւ լինի։

Նայում է նա իր մտքում չինած խաւար ու զարհուր աշխարհին եւ ապա ինքն իրեն հարց է տալիս։—

«Ա՞յս է մեր երկրի արեւածագը»։

«Ոչ, արեւածագ չէ, այլ մի ձէթի ճրագ»· պատասխանում է ինքնիրեն տուած այդ տխմար հարցին։

Յաւով եւ կսկիծով մտածում ես թէ մի՞թէ ատելութիւնը կարող է այսքան անբուժելի կերպով կուրացնել մարդկանց, որ կանգնեն, բայց աչքերով հուրհուրան, լուսայորդ արեւին նայեն եւ միայն ձէթի ճրագ տեսնեն։

Եւ Հայաստանի իրականութիւնը օրւա պէս պայծառ եւ արեւի նման լուսայորդ է։

Սովետներից առաջ Հայաստանի ներկա հողամասը միշտ էլ եղել է սակաւահող եւ անկարող մեր ժողովրդին բաւարար ապրուստ հայթայթելու, նրան ինքնաբաւ անելու։

Սովետների օրով չինւած ջրանցքների, չորացւած ճահիճների շնորհիւ մեր երկրի մշակելի հողերի տարածութիւնը ընդարձակւեց հօրնապատիկ անգամ։ Եւ շնորհիւ տրակտորների, կոմբայնների եւ գիտական մեթոտների մեր երկիրը դարձաւ առատ բերքի եւ մրգի երկիր։

Եւ մեր պատմութեան մէջ առաջին անգամ լինելով հայ ժողովուրդը դարձաւ ինքնաբաւ եւ բարգաւաճ։

Պրն. Վրացեան, սա մի՞թէ ձէթի ճրագ է։

Փոքր ու ողորմելի կրպակների, հնակարկատի, դարբնի, հիւսնի եւ կորաքամակ դերձակի մէկ–երկու հողինոց անդրջրհեղեղեան խանութներն էին կազմում նախասովետական Հայաստանի բոլանդակ արդիւնաբերութիւնը։

Այսօր Հայաստանում ստեղծուել է Եւրոպայի մեծ երկիրների համար նախանձելի հսկա արդիւնաբերութիւն։

Արհեստական ռեզինի, օդանաւաշինութեան, քիմիական նիւթերի, ալումինիումի, մեքենաշինութեան, պահածոյի, խմելիքների, շաքարի, հիւսուածեղէնի, կերպասի, բրդեղէնի, գորգի, ցիմենտի ապակու, յախճապակու, ժամացոյցի եւ ամեն երեւակայելի ապրանք եւ գործածութեան առարկա պատրաստող վիթխարի, արդիական գործարանախմբեր են ծածկում մեր հպարտ հողամասը։

Այս մեծագործութիւնը պրն. Վրացեանի աչքին լոկ ձէթի ճրագ է երեւում։

Ըստ Ռուզվելթի մօտիկ գործակից եւ երկրի տնտեսութեան հարցերին քաջատեղեակ Զէսթըր Բոլզի, վերջին քսան տարիների ընթացքում Ամերիկայի ընդհանուր եկամուտը կրկնապատկուել է։ Թաւալգլոր տնտեսական անկում ունեցող եւրոպական մեծ երկիրների բաղդատմամբ սա հսկա տնտեսական նւաճում է։

Մինչդեռ նախասովետական Հայաստանի 23 միլիոն ռուբլու արտադրութեան բաղդատմամբ Սովետական Հայաստանի ներկա արտադրութիւնը հասել է 1000 միլիոն ռուբլու կամ 50 անգամ աւելացել է։

Ի հարկէ պրն. Վրացեանի դատողութիւնով սա լոկ ձէթի ճրագ է։

Գետնափոր խրճիթների, ցեխաշէն ,ապառողջ, տգեղ գիւղերի եւ քաղաքների փոխարէն՝ մեր հրաշագործ ժողովրդի ձեռքով եւ սովետների վարչաձեւի ներքեւ այսօր մեր երկրի բոլոր մասերում ելնում է մի նոր երկիր։ Կոկիկ եւ շէն գիւղեր, սիրուն բնակարաններով, տպաւորիչ, սքանչելի հիմնարկներով, կառավարական եւ մշակութային փառաւոր, դեղեցիկ շէնքերով, պուրակներով, ծառաստաններով, լեռնային սառն ու վճիտ աղբիւրների ջրով օժտուած դեղածիծաղ եւ դրաւիչ քաղաքներ են կանգնել հների փոշու եւ աւերակների վրա։

Եւ պրն. Վրացեանը այս ամենը ձէթի ճրագ է անւանում։

Դարձեալ, սովետներից առաջ (եւ ոչ թէ «հանրապետութեան» օրով, երբ միայն քառս եւ թշւառութիւն եւ սանձարձակ մաւիղերիստական աւազակութիւն էին տիրապետում) դպրոցական աշակերտների թիւը 18,000-ից չէր անցնում։ Խօսել մասնագիտական հիմնարկների, համալսարանի, ակադեմիայի մասին դա կը լինէր խօսել անիրական ցնորքների մասին։

Այսօր մեր երկիրը ծածկուել է դպրոցական գեղեցիկ, լուսաւոր, արդիական շէնքերի մի մեծ ցանցով։ Նախասովետական շրջանի ուսանողների թուի գրեթէ հաւասար՝ լաւ պատրաստուած, մասնագէտ, լաւ վարձատրուած ուսուցիչների մի պատկառելի անձնակազմ կա։ Այսօր, նրանց ձեռքով կրթւում եւ պատրաստւում է 350,000-ի հասնող առոյգ, ուշիմ եւ խանդավառ մանուկների եւ պատանիների մի հղօր, պատկառելի բանակ՝ օգտակար, գիտակից եւ երջանիկ քաղաքացիներ դառնալու մեծ պատուի եւ պատասխանատուութեան համար։

Մասնագիտական հիմնարկները, համալսարանը եւ ասպա հայ ժողովրդի մտքի եւ մշակոյթի լուսաւոր վառարանը — ակադեմիան՝ բազմաթիւ մասնագէտներով, նոր մեթոտներով եւ գիտական միջոցներով արժէքաւորում, իմաստ եւ բովանդակութիւն եւ նորանոր հեռանկարներ են տալիս հայ ժողովրդի ցնծուն կեանքին։

Մեր պատմութեան մէջ առաջին անգամ լինելով հայ ժողովուրդը երեւան է բերում համաշխարհային համբաւ ու հմայք վայելող մեծութիւններ — Արամ Խաչատրեանը՝ որպէս երաժշտագէտ, Ալիխանեան պանծալի եղբայրները՝ որպէս տիեզերական ճառագայթների ուսումնասիրութեան հեղինակութիւններ, Վիկտոր Համբարձումեան՝ որպէս աստղագէտ եւ մաթեմատիկոս, Յովհաննէս Բաղրամեան՝ որպէս մեծ ռազմագէտ եւ բանակի զօրավար եւ դեռ շատ շատերը։

Սա էլ, ի հարկէ, անլոյս եւ անպատրոյգ ձէթի ճրագ է պրն. Վրացեանի համար։

Մեր գրողներն ու արուեստագէտները, մեր գիտուններն ու հասարակական մարդիկ մի անգամ ընդ միշտ ձերբազատուել են՝ ապրուստի, նիւթական միջոցների կաշկանդող մտահոգութիւնից։ Եւ նրանք արժեցնում են իրենց այդ ազատութիւնը նոր, առոյգ եւ մեծարժէք գործերով եւ գիւտերով ճոխացնելով մեր ժողովրդի տնտեսական եւ մշակութային կեանքը։

Սա էլ ձէթի ճրագ է կամաւոր կոյրերի համար։

Երբեք ապահով մի օր չտեսած մեր աշխարհից խսպառ վերացել է ամեն տեսակի անապահովութիւն։ Չկա անապահովութիւն օտար թշնամիներից։ Ողջ երկրում տիրում է օրինակելի ապահովութիւն։ Չկան ոճիրներ, չկան աւազակութիւններ, չկա արեւմտեան երկիրների յատուկ կիների եւ աղջիկների անպատուութեան վտանգը։ Բարգաւաճ եւ երջանիկ մեր աշխատաւորութեան առաջ ցաւի եւ պատուհասի նման էլ կանգնած չկա անգործութեան ահաւոր սպառնա-

լիքը։ Սովետական Հայաստանը երաշխաւորուած գործի եւ ապահովութեան տիպար երկիրն է։

Ձէթի ճրագ է սա — պնդում է պրն. Վրացեանը։

Եւ մեր բազմաչարչար ժողովուրդը, որ մոռացել էր ծիծաղը, մոռացել եւ դուցէ երբեք չէր էլ ճաշակել անարատ եւ ներշնչող վայելքի լուսեղէն համն ու ճաշակը — այսօր շրջապատուել է արուեստի եւ մշակոյթի մի համատարած, արեւափառ հեղեղով։

Իր մեծասքանչ եւ չքեղ օպերայի տանը եւ երգի ու պարի զարթ եւ նուիրական սրահներում, հոյակապ թատրոններում, արուեստի ճոխ թանգարաններում, զով պուրակներում եւ մտերմիկ ակումբներում — մինչեւ ամենահեռաւոր գիւղերում հայ ժողովուրդը իր կենսատու օդի եւ ջրի նման վայելում է հայ եւ միջազգային վարպետների երգն ու նուագն ու դրամաները, վրձինի եւ մուրճի գլուխ գործոցները եւ ժողովրդական միշտ թարմ, միշտ ծաղկուն երգն ու պարը — սառողջ եւ հուժկու մի մարդու մեծ ախորժակով։

Եւ մեր ժողովրդի ուրախ եւ ազատ եւ զինովցնող ծիծաղի ծնծղան հնչում է մեր նորակառոյց, ներդաշնակ փողոցներում, դալար այգիներում եւ հանդերում եւ վայելքի ու խաղի եւ աշխատանքի պահին՝ անուշ, երջանկաբեր, հրաշալի մի համանուագի նման։

Ի՞նչ է այս բոլորը եթէ ոչ ձէթի ճրագ պրն. Վրացեանի քինախնդիր աչքում։

Ինչպէս որ դիտել է տուել մեծ արձակագիր Դերենիկ Դեմիրճեանը «Սովետական կարգերի ամենամեծ ստեղծագործութիւնը ժողովուրդն է»։

Այսօր հայ ժողովուրդը անահ է ու հպարտ, ընկերասէր է ու մեծահոգի, խիզախ է եւ միասնական։ Պահելով հանդերձ իր պատմական լաւագոյն արժանիքներն ու ընդունակութիւնները՝ սովետահայ ժողովուրդը կոփուել եւ հարստացել է նորանոր ընդունակութիւններով եւ առաւելութիւններով։

Տանք մի երկու հակակշիռ «Հանրապետութեան» բանակի եւ նոր Հայաստանի բանակի, հանրապետական ռազմագէտների եւ սովոտահայ զօրավարների։

Հանրապետութեան «քաջարի» բանակը չէ՞ր որ առանց մէկ հատիկ դնդակ արձակելու թուրքերին թողեց անառիկ Կարսը եւ ամօթալի փախուստի դիմեց տաճիկ դահիճների հրին ու սուրին յանձնելով մեր ժողովրդին։

Մինչդեռ Սովետական Հայաստանի փառապանծ Թամանեան զօրաբաժինը՝ անպաշտպանելի համարուող իր դիրքերը հերոսաբար պահելուց յետո՝ չարաչար պարտութեան մատնեց իրեն դէմ կռուող՝ ամբան յաղթութիւններով լրբացած Հիտլերի բանակին։

Եւ Ստալինգրադի եւ Կերչի եւ Սեւաստապոլի ու Կիեւի եւ Մինսկի փառաւոր յաղթանակներից յետո Հայկական պանծալի զօրաբաժինը, Կարմիր Բանակի առաջապահ զօրքերի հետ հպարտ ու յաղթական՝ մտաւ գերման ֆաշիստների հզօր մայրաքաղաք — Բերլին՝ ճանճերի նման իր առջեւից փախցնելով նաեւ Հիտլերական մեծ «սպարապետ» Դրոյի դաւաճան բանակը։

«Հանրապետութիւն»ը հայ ժողովրդին տուեց Սեպուհներ, Նըժդեհներ եւ Դրոներ։ Սովետական Հայաստանը հայ ժողովրդին փառաւորեց փայլուն զօրավարներ Սաֆարեանի եւ Մարտիրոսեանի, Բալտիկի արծիւ Նելսոն Ստեփանեանի եւ հայ ժողովրդի մեծ որդին ու փառքը՝ բանակի մեծ զօրավար Յովհաննէս Բաղրամեանի եւ 65-ից աւելի հերոս ու քաջ զօրավարների մի պանծալի շքախմբով։

Ապա քառորդ միլիոն հոգուց բաղկացած հայ քաջերի բանակը իր խիզախութեամբ եւ հերոսական սխրագործութիւններով յաւերժական փառք եւ անմահութիւն ապահովեց մեր արդէն փառապանծ ժողովրդի համար։

Իրենց մաքուր եւ թանկ արիւնով, իրենց կենսուրախ եւ անդիմադրելի հմայքով մեր քաջերը անքակտելի եւ տեւական դարձրին Միութենական ժողովուրդների արդէն ամուր եւ անխարդախ եղբայրութիւնը։

Նրանք ողջ ազատատենչ մարդկութիւնը յաւիտեանս պարտական եւ երախտապարտ թողեցին նրանց ծնունդ տուող հայ մեծ ժողովրդին։ Երախտագիտութեան այս տուրքից մեծ բաժին ունի ամերիկեան հզօր ու ազնիւ ժողովուրդը, որի երիտասարդ որդիներից հարիւր հազարաւորներ այսօր ապրում եւ շնչում են շնորհիւ Թամանում եւ Ստալինգրադում եւ Սեւաստապոլում եւ Կիեւում եւ Ռուսական եւ Լեհական հողամասերում հայ քաջերի վարած ահեղ ու հերոսական կռիւների նացի բարբարոսների դէմ։

Ահա թէ ինչպէս է ազնուացել եւ զօրացել եւ գերազանց դարձել մեր ժողովուրդը սովետների վարչաձեւի ներքեւ։ Ահա թէ ինչպէ՞ս է կռվում պողպատը։

Սա՞ էլ միթէ ձէթի ճրագ է, պրն. Վրացեան։

Չէ՛, մոայլ եւ տժգոյն եւ ծխացող այդ ձէթի ճրագը, մահի խաւարով մարելու մօտ այդ անբախտ ձէթի ճրագը պրն. Վրացեանի քար սրտում, նրա չար աչքերում, նրա ոխակալ հոգումն է: Որովհետեւ նա խուսափում է օրւա մեծափառ լոյսից: Որովհետեւ նա մութն ու խաւարն է սիրում: Որովհետեւ նրա արնակալած աչքերն օրւա եւ արեւի լոյսին դիմանալ չեն կարող:

Ես չեմ զարմանում եւ չեմ զայրանում ,որ պրն. Վրացեանը թշնամաբար ժխտում եւ ուրանում է մեր ժողովրդի անճառելի արեւածագը: Շատ զարմանալի եւ տարօրինակ կը լինէր եթէ նա տեսնէր նրա հրաշալի չքեղութիւնը եւ հրճւէր ու փառաւորուէր նրա վեհութեամբ:

Այդ կարող էր պատահել միայն այն ժամանակ երբ նա ցած դնէր իր սեփական ժողովրդի եւ հայրենիքի դէմ գործածած իր բոլոր անմաքուր եւ ժանգոտած զէնքերը: Եթէ նա մոռանար դաւերով եւ ահաւոր ձախողութիւններով պատուհասւած իր մութ անցեալը: Երբ նա հրաժարուէր հայ ժողովրդի թշնամի օտար չրջանակների վտանգաւոր ծառայութիւնից:

Բայց քանի դեռ նա եւ նրա համախոհները յամառում եւ ամրապնդւում են իրենց դաւերի անել այդ ճահճում, քանի դեռ նա վրէժխնդրութեամբ եւ ոխով է դիտում մեր ժողովրդի լուսաչող վերելքն ու նւաճումները — այնքան ժամանակ նա կը մնա մտքով եւ աչքով կոյր, այնքան ժամանակ մեր ժողովրդի չողչողուն արեւածագի լոյսը չի թափանցելու նրա խաւարակուռ հոգում եւ աչքերում:

Գթութեան կարօտ, եղկելի մարդ է նա — անտուն, անյոյս, անհայրենիք:

Ո՛ւր էլ որ լինի նա, որքան մեծ գին էլ նա ստանա ուրացման չուկաներում իր ժողովրդին վաճառելուց — նրա սրտից ու աչքերից երբեք չի փարատւելու այդ թանձր, ահաւոր խաւարը:

Որովհետեւ նրա ձեռների եւ խղճմտանքի վրա տակաւին լերդացած մնում է տասնեակ հազարաւոր աղնիւ եւ անմեղ հայերի թանկ, մաքուր արիւնը: Եւ բոլոր ովկեանոսների ջրերը եւ քիմիական մաքրիչ բոլոր նիւթերը չեն կարող նրա ձեռքերից եւ խղճմտանքից ու հոգուց սրբել այդ այրող եւ անջնջելի արիւնը:

Թշւառ մարդ է նա — զատապարտւած իր ժողովրդի ահեղ դատաստանից, զատապարտւած կեանքի իրականութիւնից: Եւ տակաւին յորդող ատելութեամբ, մոլեգնօրէն նա սպասում է որ աւելի ահարկու դժբախտութիւններ հասնին իր ժողովրդին: Սպասում է որ իր ժո-

ղովրդի գլխին եւ նրա ծաղկուն, պայծառ հողի վրա պայթեն արեան մրրիկներ, որպէս զի այդ արեան հեղեղում, այդ բոցերի եւ մոխիրների միջին դուցէ նա գտնի իր կորցրած պիղծ եւ արիւնոտ աթոռը:

Բարեբախտաբար հայ ժողովրդի դժբախտութեան չրջանը անվերադարձ անցել, գնացել է: Էլ ոչ մի ձեռք չկա այնքան հզօր, որ նրան հալուածի, էլ ոչ մի զէնք չկա այնքան հատու, որ նրան խոցի:

Իսկ նրանք որ նրան դժբախտութիւնն ու արիւնն են ցանկանում — նրանց սպասում է կսկիծ եւ յուսախաբութիւն: Նրանց սպասում է Յուդա Իսկարովտացու մաշող, տառապագին, սրտագալար մահը, Վասակ Սիւնու դառն ու հոգեչարչար, զարհուրելի մահը:

Եւ մի մարմրուն, հեւասպառ ձէթի ճրագ անգամ իր տրտում, հիւանդ լոյսով չի լուսաւորելու նրանց հոգեվարքի անտակ ու սեւ սարսափը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԵՒԱԾԱԳԸ ՄԻՇՏ ԱՒԵԼԻ ԼՈՒՍԱՊԱՅԾԱՌ

Մեր երկրի յաղթական դարաշրջանի արեւածագը չողում է աւելի չքեղ եւ աւելի լուսապայծառ սովետների հզօր պաշտպանութեամբ եւ մեր ժողովրդի հրաշագործ բազկի շնորհիւ:

Վարդակարմիր ու լուսագեղ այս արեւածագի ներքեւ պայծառացել է Հայոց Աշխարհը իր բովանդակ չքնաղ հրապոյրներով եւ դանձերով:

Ծաղկել եւ կանաչել են մեր այգիներն ու անդաստանները հրճուանքի եւ անուրջի նման:

Դարերի խաւարն ու մղձաւանջն ու սարսափը չքացել են անհետ եւ անդարձ:

Եւ մեր ժողովուրդը՝ հպարտ ու ազատ, աշխատանքի կայծակէ մուրճն ու մանգաղը ձեռքին՝ կերտում է մի չքեղ եւ երջանիկ աշխարհ, մի դալար եւ խնդուն երկիր իրեն եւ աւելի բախտաւոր իր յաջորդների համար:

Եւ ջուրն ու հողը, եւ մեր լեռները վեհատեսիլ՝ ուժով եւ լոյսով եւ հաղար բարիքով ծիծաղում են մեր ժողովրդին:

Այսպէս, երգով ու ցնծութեամբ եւ կառուցումով եւ յաղթանակով եւ լիութեամբ շարունակ աւելի պայծառանում եւ փառաւորւում է մեր ժողովրդի նոր, լուսեղէն դարը:

Հակառակ թշնամիների բոլոր դաւերին, չկամութեան եւ սպառնալիքին հայրենադարձը պիտի հոսի ու վարարի դարձեալ դեպի նման։ Եւ սիրուքը պիտի դատարկուի հայերից ինչպէս որ նուռն է դատարկւում իր համեղ եւ հիւթեղ հատիկներից։

Եւ ո՛չ մէկ դաշնագիր, ո՛չ մէկ զինակցութիւն, ո՛չ մէկ ուժ կարող պիտի լինի մեր ժողովրդի պատմական, աստուածատուր, եւ հերոսական արիւնով սրբագործուած հողերը յափշտակիչ ոճրագործների բիրտ դարշապարի ներքեւ պահել։

Սա՛ է մեր երկրի իրականութիւնը, սա՛ է մեր ժողովրդի ընթացքը — հաւատքով եւ խնդութեամբ յորդող նրա դրոհը դէպի շատ աւելի շքեղ եւ անվախճան դալիքը։ Սա է նրա լուսապայծառ արեւածաղը։

Ողջո՛յն հայ ժողովրդի հրաշագեղ եւ մեծափառ արեւածագին։

Ողջո՛յն նրա լուսեղէն, անվախճան դալիքին։

200